ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2026 թվականի N 607-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 09-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հերթական ատեստավորման հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

Որոշում եմ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության ատեստավորում անցկացնելու համար ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ համայնքային ծառայության ատեստավորումը անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժ/պ՝ Հովհաննես Հարությունյանին, ով պարտավորվում է մասնակիցներին բացատրել

թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 09
գ. Բաղրամյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Բաղրամյան համայնքի ղեկավարի

2026 թվականի սեպտեմբերի 09-ի N 607-Ա որոշման

1. Միեր Լյովայի Հարթենյան–Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

2.Գևորգ Սպարտակի Գևորգյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

2. Սյուզաննա Գևորգի Հակոբյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կռավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ

3.Մուշեղ Ռաֆիկի Սահակյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանի

4.Վարուժան Հակոբի Հակոբյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանի

5.Վարդուհի Գագիկի Բաղդասարյան– Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շենիկ բնակավայրի «Շենիկի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն